Liberté • Égalité • Fraternité
RÉPUBLIQUE FRANÇAISE

MINISTÈRE DE LA JUSTICE

6

# ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

## Տրված է կարճ ժամանակով ազատազրկման մեջ գտնվող անձին

**(16ից -18 տարեկան անչափահաս, ով մեղսակից կամ համագործակից է չափահաս մարդու հետ,ով օրենքի խախտում է կատարել քրեական դատավարության օրենսգրքի 706-73 հոդվածի կետով)**

**Սույն տեղեկատվությունը պետք է տրվի ձեզ մի լեզվով, որը դուք հասկանում եք:**

***<u>Կարճ ժամանակով ազատազրկման մեջ գտնվելու ամբողջ տևողության ընթացքում դուք կարող եք պահպանել այս փաստաթուղթը</u>***

Դուք տեղեկացվում էք, որ տեղադրվել եք կարճ ժամանակով (կամ նախնական) ազատազրկման մեջ, քանի որ մեկ կամ ավելի հավանական պատճառներով կասկածվում եք նրանում, որ որպես մեղսակից կամ համագործակից մի չափահաս մարդու, կատարել եք կամ փորձել էք կատարել մի (օրենքի) խախտում կամ կազմակերպված հանցագործութուն, ինչը պատժվում է կալանքով:

Դուք իրավունք ունեք իմանալ ենթադրյալ հանցագործության կատարման անունը, ամսաթիվը եւ տեղը, որի համար ենթարկվել եք հետաքննության եւ ձեզ կարճ ժամանակով ազատազրկման դրման պատճառները:

Դուք կհարցաքննվեք այդ փաստերի մասին քսանչորս ժամ տևողությամբ կալանքի (կարճ ժամանակով ազատազրկման) ընթացքում:

Այդ ժամանակահատվածի վերջում, հանրապետության դատախազը (կամ քննչական դատավորը) կարող է որոշել կարճ ժամանակով ազատազրկման ժամկետի նորից քսանչորս ժամով երկարաձգում: Անհրաժեշտության դեպքում դուք կներկայացվեք այդ դատավորին վիդեոկոնֆերանսի միջոցով:

Բացառիկ դեպքերում, ու եթե անհրաժեշտ է հետաքննության կամ նախաքննության համար, ազատությունների ու կալանքի դատավորի - հանրապետության դատախազի խնդրանքով, կամ քննչական դատավորի կողմից կարող է որոշվել ժամկետի երկու լրացուցիչ երկարաձգում՝ յուրաքանչյուրը քսանչորս ժամով:

Այդ նախնական կալանքից հետո, դուք հանրապետության դատախազի (կամ քննչական դատավորի) որոշմամբ, կամ կներկայացվեք այդ դատավորին, կամ ձեզ ազատ կարձակեն: Առաջին դեպքում, դուք կներկայանաք դատավորի առաջ, ամենաուշը 20 ժամվա ընթացքում, ձեր կարճ ժամանակով ազատազրկման ժամկետի վերջից սկսած, բացառությամբ այն դեպքի, եթե ձեր կարճ ժամանակով ազատազրկումը տևել

է 72 ժամից ավելի:

## ԲԱՑԻ ԱՅԴ ՁԵԶ ՏԵՂԵԿԱՑՐԵԼ ԵՆ, ՈՐ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ.

### Որոշ մարդկանց տեղյակ պահելու մասին

Ոստիկանության պաշտոնյա կամ գործակալ կզգուշացնի ձեր ծնողներին կամ խնամակալին, կամ անձին, կամ այն ծառայությանը, որի խնամքի ներքո եք, նախնական կալանքի մասին, որին դուք ենթակա եք:

Դուք նաև կարող եք այդ մասին ասել ձեզ գործատուին:

Եթե դուք օտարերկրի քաղաքացի եք, դուք կարող եք բացի այդ խնդրել տեղեկացնելու ձեր երկրի հյուպատոսական իշխանություններին:
Հանրապետության դատախազը (կամ քննչական դատավորը) կարող է այնուամենայնիվ առարկել այդ խնդրանքներին՝ հետաքննության կարիքներից դրդված: Եթե չլինեն անհաղթահարելի հանգամանքներ, այդ պահանջները կդրվեն ոչ ուշ, քան 3 ժամվա ընթացքում, այն պահից սկսած, երբ դուք ներկայացրած կլինեք ձեր դիմում-խնդրանքը:

### Բժշկական կոնսուլտացիա անցնելու մասին

Դուք կարող եք խնդրել բժշկական քննություն անցնել: Նախնական ազատազրկման երկարաձգման դեպքում, դուք կարող եք խնդրել նորից մեկ անգամ զննվել բժշկի կողմից: Եթե որոշվել են նոր երկարացումներ նախնական կալանքից երկու օր հետո, դուք պարտադիր կհետազոտվեք բժշկի կողմից յուրաքանչյուր լրացուցիչ երկարացումից առաջ: Այդ խնդրանքները կարող են նաև ներկայացվել ձեր ծնողների, խնամակալի կամ այն անձի, կամ կազմակերպության կողմից, ում ձեզ վստահել են:

### Հայտարարություններ անելու, հարցերին պատասխանելու կամ լռություն պահելու մասին

Երբ որ դուք հայտարարեք ձեր անուն-ազգանունը, դուք իրավունք կունենաք լսումների ժամանակ.
- հայտարարություններ անել
- պատասխանել ձեզ տրվող հարցե
- կամ պահպանել լռություն

### Իրավաբանի օգնության մասին

- **Իրավաբանի ընտրությունը**

Նախնական ազատազրկման սկզբից սկսած, ու եթե վերջինս երկարաձգվի, հենց երկարաձգման սկզբից, դուք կարող եք խնդրել, որ ձեզ աջակցի ձեր ընտրած իրավաբանը: Եթե դուք ի վիճակի չեք ընտրել իրավաբանի կամ էլ եթե իրավաբանի հետ անհնար է կապվել, դուք կարող եք խնդրել, որ որևէ իրավաբան ձեր գործով զբաղվի ավտոմատկերպով:

Ձեր փաստաբանը կարող է նշանակվել նաև ձեր ծնողների կամ, խնամակալի, կամ այն անձի, կամ ծառայության կողմից, ում ձեզ վստահել են:

- **Իրավաբանի օգնության ու գործողության վերջնաժամկետի մասին**

Իրավաբանը կարող է:

- խոսել ձեզ հետ 30 րոպեի ընթացքում, այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են հարցազրույցի գաղտնիությունը:
- եթե դուք խնդրեք, իրավաբանը ներկա կլինի ձեր լսումներին եւ հարցաքննումներին:

: Այդ դեպքում, ձեր 1[առաջին] լսումը, եթե դա վերաբերում է միայն ինքնության տարրերին, չի կարող սկսել առանց ձեր փաստաբանի ներկայության, մինչև երկու ժամ վերջնաժամկետի լրանալը, որը սկսվում է նրան ուղղված ձեր խնդրանքի ծանուցումից հետո: : Այնուամենայնիվ, եթե հետաքննության կարիքները դա պահանջում են, ձեր 1[առաջին] լսումը կարող է անմիջապես սկսվել, նույնիսկ ձեր փաստաբանի բացակայության դեպքում՝ հանրապետության դատախազի (կամ քննչական դատավորի) թույլտվությամբ:

Եթե ձեր իրավաբանը նեկայանա, երբ մի լսում կամ հարցաքննություն ընթացքի մեջ է, այդ գործողությունը կարող է դադարեցվել ձեր խնդրանքով, որպեսզի թույլ տրվի նրա հետ խոսել:

Հանրապետության դատախազը (կամ քննչական դատավորը) ու ազատությունների եւ կալանքի դատավորը կարող են, այնուամենայնիվ, ծայրահեղ պատճառներից դրդված եւ բացառիկ դեպքում, որոշել հետաձգել ձեր փաստաբանի օգնությունը լսումների ընթացքում,12 ժամով, մի պայման, որը կարող է նորացվել ևս 12 ժամով:

**Թարգմանչի աջակցությունը**

Եթե դուք չեք խոսում կամ հասկանում ֆրանսերենը, դուք իրավունք ունեք օգտվել թարգմանչի անվճար օգնությունից՝ ձեր լսումների եւ ձեր փաստաբանի հետ շփվելու նպատակով.

**Նախնական կալանքի դադարեցման խնդրանքը**

Դուք կարող եք խնդրել հանրապետության դատախազին, քննչական դատավորին կամ ազատությունների եւ կալանքի դատավորին, երբ այս դատավորը կխոսի հնարավոր երկարաձգման կալանքի մասին, որվերջինս չերկարաձգվի:

**Ձեր գործի որոշ հատվածների մատչելիության մասին**

Ձեր կամ ձեր իրավաբանի խնդրանքով, դուք կարող եք խնդրել տեսնելու, ամենաուշը մինչև նախնական կալանքի հավանական երկարաձգման.
- ձեր կալանքի տակ դրման արձանագրությունը.
- բժշկական կոնսուլտացիայի վկայագրերը.
- ձեր լսումների արձանագրությունը կամ արձանագրությունները.